ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 136

21 մայիս 2018թ.

ՀՐԱՆՏ ԱԼԻԿԻ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ԵՎ ՆՈՒՆԵ ՍԼԱՎԻԿԻ ՆԻԿՈԼՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հրանտ Ալիկի Միրզոյանին և Նունե Սլավիկի Նիկոլյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 03042018-07-0036), քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 40 հասցեում գտնվող 3.4891հա մակերեսով հողամասի և (սեփականության իրավունքի գրանցման վկայական N03042018-07-0037) քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց,թիվ 40/8 հասցեում գտնվող 2,1944 հա մակերեսով հողամասերի միավորման հետևանքով առաջացած 5,6835հա մակերեսով հողամասի հասցեն թողնել նույնը՝քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 40:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 137

21 մայիս 2018թ.

ԳԵՎՈՐԳ ՄԿՐՏԻՉԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ,ԱԼՎԱՐԴ ԳԵՎՈՐԳԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ,ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՀԵ ԳԵՎՈՐԳԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Գևորգ Մկրտիչի Հայրապետյանին,Ալվարդ Գևորգի Հայրապետյանին,Աննա Գևորգի Հայրապետյանին և Վահե Գևորգի Հայրապետյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակարանին (սեփականության իրավունքի գրանցման վկայական N2632021 տրված՝ 2010 թվականի մարտի 31-ին) տրամադրել հասցե՝ քաղաք Ծաղկաձոր, Խաչատուր Կեչառեցու փողոց, 8 շենք, 28 բնակարան:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 138

23 մայիս 2018թ.

ՄՀԵՐ ԼԵՎՈՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Մեր Լևոնի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայական N2638674 տրված՝ 2009 թվականի մայիսի 20-ին) 0.08 հա ընդհանուր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց 5-րդ փակուղի, թիվ 3:

ԱՐԹՈՒՐ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 139

25 մայիս 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սույն թվականի մայիսի 28-ին կազմակերպել Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի հարյուրամյակին նվիրված միջոցառում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ